Digitally signed by GASPARYAN LUSINE
7809730103
Date: 2022.09.20 11:11:38 AMST

**Թեմատիկ պլանավորում**

**Առարկա՝ գրականություն**

**Դասարան՝ 7-րդ դասարան**

**Տարեկան 68 ժամ**

**Շաբաթական 2 ժամ**

| | |
|---|---|
| **Նպատակ** | Ունենա գրականագիտական տարրական գիտելիքներ (գրական ժանրեր, պատկերավորման միջոցներ).<br>Հասնել նրան, որ գրավոր շարադրի սեփական մտքերը, զգացումները, կարծիքը, գրագետ խոսքը դարձնի ինքնարտահայտման և ինքնադրսևորման միջոց.<br>Հասնել նրան, որ կարդա գեղարվեստական ոչ բարդ տեքստեր և բանավոր ու գրավոր վերարտարի դրանց բովանդակությունը.<br>Ձևավորել արժեքային համակարգ |
| **Վերջնարդյունքներ** | Կարողանա՝<br>- տարբերակել արձակ և չափածո ստեղծագործությունները<br>- գտնել կարդացած տեքստերում հանդիպած բառերի իմաստն ու նշանակությունը. |

| | |
|---|---|
| | - կարողանա սահուն և գրագետ կարդալ՝ հասկանալով կարդացածի իմաստը և պահպանելով հայերեն խոսքի ճիշտ արտասանությունը.<br>- գրագետ հայերենով բանավոր և գրավոր արտահայտել իր կարծիքը՝ կարդացածի, լսածի, տեսածի վերաբերյալ. |
| | |

| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
|---|---|---|
| Եղիշե Չարենցի կյանքն ու ստեղծագործական ուղին, ստեղծագործությունները | .Ամրապնդել պատկերացումը բանաստեղծությունների մեջ պատկերված հայրենիքի, կարոտի, մարդկային ապրումների ու զգացողությունների մասին: | .Վերարտադրի գրողի կենսագրության կարևոր մի քանի դիպված:<br>.Վեր հանի բանաստեղծություններում արտահայտած հույզն ու հեղինակի ապրումները:<br>. Կարողանա արտահայտիչ ընթերցի, ապա անգիր ներկայացնի բանաստեղծություններն ամբողջությամբ կամ որոշ հատվածներ: |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 4/1 | 9 | Եղիշե Չարենցի կյանքն ու ստեղծագործական ուղին |
| 4/2 | 16 | «Հայրենիքում» բանաստեղծությունը |
| 4/3 | 17 | «Ցաղ անձնական» բանաստեղծությունը |
| 4/4 | 22 | «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը |
| | | **Բանաստեղծական շարք** |
| | | Հիշողություններ Չարենցի մասին |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| | .Զևավորել տեքստի հիմնական ասելիքն առանձնացնելու կարողությունը:<br>.Նպաստել հասկացածը սեփական խոսքով վերարտադրելուն: | . Վերարտադրի գրողի կենսագրության կարևոր մի քանի դիպված:<br>.Բացահայտի տեքստի գլխավոր գաղափարը, հերոսների վարքագիծը:<br>. Դայտնի ինքնուրույն տեսակետ դեպքերի և հերոսների վարքագծի վերաբերյալ: |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 4/1 | 25 | Դերենիկ Դեմիրճյանի կյանքն ու ստեղծագործական ուղին |
| 4/2 | 27-46 | «Ավելորդը» պատմվածքը |
| 4/3 | 27-46 | «Ավելորդը» պատմվածքը |
| 4/4 | 27-46 | «Ավելորդը» պատմվածքը |
| 4/5 | 27-46 | «Ավելորդը» պատմվածքը |

| | | Պատմվածք,դիպաշար |
|---|---|---|
| | | **Թեմատիկ գրավոր աշղատանք 1** |
| **Ստեփան Զորյան** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| Ստեփան Զորյանի կյանքն ու ստեղծագործական ուղին: «Զրիորի մոտ» պատմվածքը | .Ամրապնդել պատկերացումը տեքստում պատկերված մարդ-հասարակություն փոխհարաբերությունների մասին:<br>.Ձևավորել գիտելիքներ հեղինակի կյանքի, տեքստի վրա հեղինակի կենսագրության և ապրած ժամանակաշրջանի ազդեցության, տեքստի բառապաշարի, կերպարների մասին: | . Վերարտադրի գրողի կենսագրությունը, պատկերացում կազմի ապրած դարաշրջանի մասին:<br>.Տարբերակի հեղինակի ստեղծագործություններից առավել հայտնիները:<br>.Վերարտադրի ստեղծագործության բովանդակությունը՝ վերաբերմունք դրսևորելով հերոսների վարքագծի նկատմամբ: |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 3/1 | 48 | Ստեփան Զորյանի կյանքը և ստեղծագործական ուղին |
| 3/2 | 62-70 | «Զրիորի մոտ» պատմվածքը |
| 3/3 | 62-70 | «Զրիորի մոտ» պատմվածքի կերպարները |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| | .Ձևավորել գիտելիքներ հեղինակի կյանքի, տեքստի վրա հեղինակի կենսագրության և ապրած ժամանակաշրջանի ազդեցության վերաբերյալ:<br>.Ձևավորել հիմնավորված դիրքորոշում տեքստի գլխավոր հերոսների բնավորության, արտաքին նկարագրի վերաբերյալ:<br>. Ձևավորել տեքստի հիմնական և երկրորդական մտքերն առանձնացնելու կարողությունը: | .Վերարատադրի գրողի կենսագրության կարևոր իրադարձությունները:<br>.Վերարտադրի ընթերցածի բովանդակությունը՝ հայտնելով ինքնուրույն տեսակետ դեպքերի և հերոսների վարքագծի վերաբերյալ:<br>.Հասկանա և մեկնաբանի պատմվածքում արծարծվող կոնֆլիկտի առաջացման պատճառը:<br>. Նկարագրի միջավայրը, որտեղ կատարվում են դեպքերը: |
| 7/1 | 74 | Ակսել Բակունցի կյանք ու ստեղծագործական ուղին |
| 7/2 | 82-99 | «Սպիտակ ձին» պատմվածքը |
| 7/3 | 82-99 | «Սպիտակ ձի» պատմվածքը |
| 7/4 | 82-99 | «Սպիտակ ձին» պատմվածքը |
| 7/5 | 82-99 | «Սպիտակ ձին» պատմվածքը |
| 7/6 | 82-99 | «Սպիտակ ձին» պատմվածքը |
| 7/7 | 82-99 | «Սպիտակ ձին» պատմվածքը |
| | | Գուրգեն Մահարի,Հատվածներ Բակունցի մասին |
| | | **Թեմատիկ գրավոր աշխ • 2** |
| | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| | .Ընդլայնել գիտելիքները ստեղծագործություններում պատկերված հայրենիքի ճակատագրի, մարդկային ապրումների ու | Վերարատադրի գրողի կենսագրության կարևոր իրադարձությունները:<br>.Ներկայացնի բանաստեղծության քնարական հերոսի ապրումները:<br>. Նախ արտահայտիչ ընթերցանության, ապա |

| | | |
|---|---|---|
| | զգացումների, ապրած կարոտի, սպասման վերաբերյալ:<br>.Նպաստել ստացած գիտելիքները հիշողությունով, սեփական խոսքով մեկնաբանելուն: | անգիր ներկայացնի բանաստեղծությունները:<br>.Յասկանա և կարողանա խոսքում գործածել բանաստեղծության մեջ հանդիպած անծանոթ բառերը: |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 5/1 | 104 | Ն. Զարյանի կյանքն ու ստեղծագործական ուղին |
| 5/2 | 113 | «Հայրենի տուն» բանաստեղծությունը |
| 5/3 | 113 | «Յայրենի տուն» բանաստեղծությունը |
| 5/4 | 115 | «Հայերեն» բանաստեղծությունը |
| 5/5 | 115 | «Յայերեն» բանաստեղծությունը |
| | | Թեմայի ամփոփում |
| | | Գործնական աշխ • |
| | | |
| Կրկնություն | | |

| | | |
|---|---|---|
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| | . Ներկայացնել ստեղծագործությունների և հեղինակի ինքնակենսագրության միջև եղած կապը:<br>.Ձևավորել գիտելիքներ գրողի կյանքի և ապրած ժամանակաշրջանի թողած ազդեցության վերաբերյալ: | . Վերարտադրի գրողի կենսագրությունը, ներկայացնի ապրած ժամանակաշրջանը:<br>.Տա սեփական կարծիքը կարդացածի, լսածի, զգացածի վերաբերյալ:<br>.Վերարտադրի տեքստի բովանդակությունը՝ դրսևորելով վերաբերմունք հերոսների արարքների հանդեպ:<br>. Նկարագրի միջավայրը, որտեղ կատարվում են դեպքերը: |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 4/1 | 117 | Գուրգեն Մահարու կյանքն ու ստեղծագործական ուղին |
| 4/2 | 120-127 | «Ինքնակենսագրական» (կրճատումներով) |
| 4/3 | 130-131 | «Բալլադ Զայոյի և առաջին սիրո մասին» բանաստեղծությունը |
| 4/4 | 132-133 | «Օրոր, օրոր» բանաստեղծությունը |
| | | Թեմատիկի գրավոր աշխ |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| | .Ամրապնդել պատկերացումը բանաստեղծություններում պատկերված հայրենիքի, | .Վերարտադրի բանաստեղծի կենսագրությունը, ներկայացնի ապրած |

| | | |
|---|---|---|
| | հայրենի բնության, հեղինակի զգացողության, նրա ապրումների, հույզերի մասին: .Համեմատել տարբեր բանաստեղծությունների հետ, ընդհանրացումներ անել: | ժամանակաշրջանը: .Բացահայտի բանաստեղծությունների գլխավոր գաղափարը: .Ուսումնասիրի բանաստեղծությունների բառապաշարը, պատկերավոր արտահայտությունները: . Նախ կարողանա արտահայտիչ ընթերցի, ապա անգիր ներկայացնի բանաստեղծությունները: |
| | **Էջ** | **Դաս** |
| 5/1 | 134 | Հովհաննես Շիրազի կյանքն ու ստեղծագործական ուղին |
| 5/2 | 137 | «Թագադրում» բանաստեղծությունը |
| 5/3 | 138-139 | «Հայ ժողովրդի երգը» բանաստեղծությունը |
| 5/4 | 139 | «Էրապրոմտ» բանաստեղծությունը |
| 5/5 | 140 | «Կտակ» բանաստեղծությունը |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| | .Ձևավորել գիտելիքներ բանաստեղծի կյանքի և ապրած ժամանակաշրջանի ազդեցության, բանաստեղծությունների բառապաշարի, ոճի, կառուցվածքի առանձնահատկությունների մասին: | . Վերարատադրի գրողի կենսագրության կարևոր իրադարձությունները: .Վերաշարադրի բանաստեղծությունների բովանդակությունը՝ կիրառելով նոր սովորած բառերն ու պատկերավոր արտահայտությունները: .Բանաստեղծությունների բովանդակությունը շարադրի արձակ ձևով: . Նախ կարողանա արտահայտիչ ընթերցի, ապա անգիր ներկայացնի բանաստեղծությունները: |
| | **Էջ** | **Դաս** |
| 4/1 | 144 | Համո Սահյանի կյանքն ու ստեղծագործական ուղին: «Ծով էր, գիշեր էր…» բանաստեղծությունը |
| 4/2 | 148-149 | «Անունդ տալիս» բանաստեղծությունը |
| 4/3 | 149-150 | «Ուր որ նայում եմ» բանաստեղծությունը |
| 4/4 | 151 | «Իմ քարափներն ու ես» բանաստեղծությունը |
| | | Թեմատիկ գրավոր աշխ |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |

| | | |
|---|---|---|
| Ս. Կապուտիկյանի կյանքն ու ստեղծագործական ուղին, ստեղծագործությունները | .Նպաստել ստացած գիտելիքները հիշողությունով, սեփական խոսքով մեկնաբանելուն:<br>. Համեմատել տարբեր բանաստեղծությունների հետ, ընդհանրացումներ անել, գրել կարծիք: | . Վերարտադրի գրողի կենսագրության կարևոր փաստերը:<br>. Բանաստեղծության քնարական հերոսի ապրումներն ու զգացողությունները համեմատի շրջապատում իրեն հայտնի նմանատիպ մարդկանց հետ, տա սեփական եզրակացությունը:<br>. Նախ արտահայտիչ ընթերցի, ապա կարողանա անգիր ներկայացնի բանաստեղծությունը: |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 2/1 | 156 | Ս. Կապուտիկյանի կյանքն ու ստեղծագործական ուղին |
| 2/2 | 157-158 | «Քելե՛, լաո՛» բանաստեղծությունը |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| | .Ընդլայնել գիտելիքները ստեղծագործություններում պատկերված հայրենիքի ճակատագրի, մարդկային ապրումների ու զգացումների, ապրած կարոտի, սպասման վերաբերյալ:<br><br>. Ձևավորի գիտելիքներ հեղինակի՝ մոր հանդեպ ունեցած սիրո, մեծարման, որդիական երախտագիտության մասին: | .Վերարտադրի գրողի կենսագրությունը՝ ներկայացնելով ապրած ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունները:<br>.Ներկայացնի՝ ինչ կերպ է արտահայտվում բանաստեղծը հայրենիքի և մոր նկատմամբ սերը, հույզերը, կարոտի զգացումները:<br><br>. Բացահայտի բանաստեղծության գլխավոր գաղափարը, համեմատի մայրական թեմայով գրված այլ բանաստեղծությունների հետ: |
| | **Էջ** | **Դաս** |
| 3/1 | 159 | Պարույր Սևակի կյանքն ու ստեղծագործական ուղին |
| 3/2 | 168-169 | «Քիչ ենք, բայց հայ ենք» բանաստեղծությունը |
| 3/3 | 171-172 | «Մոր ձեռքերը» բանաստեղծությունը |
| | | Գործնական աշխ |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| | .Սովորեցնել վեր հանել տեքստի հիմնական գաղափարը:<br>.Զարգացնել | . Վերարտադրի գրողի կենսագրությունը, ընկալի ապրած դարաշրջանը:<br>.Տարբերակի հեղինակի |

| | | |
|---|---|---|
| | ստեղծագործական կարողությունները: .Սովորեցնել հիմնավորված կարծիք հայտնել հերոսներից յուրաքանչյուրի մասին: | ստեղծագործություններից առավել հայտնիները: . Վերարտադրի ընթերցածի բովանդակությունը՝ հայտնելով ինքնուրույն տեսակետ դեպքերի և հերոսների վարքագծի շուրջ: .Վերլուծի գլխավոր հերոսի կերպարը: |
| 3/1 | 179 | Մուշեղ Գալշոյանի կյանքն ու ստեղծագործական ուղին |
| 3/2 | 181-194 | «Մամփրե արքան» պատմվածքը |
| 3/3 | 181-194 | «Մամփրե արքան» պատմվածքի կերպարները |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| | .Ձևավորել գիտելիքներ տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը տեսնելու, զգալու, ներկայացնելու շուրջ: . Բացահայտի տեքստի գլխավոր գաղափարը, ասելիքը: .Նպաստել սեփական խոսքով հիմնավորված կարծիք հայտնել հերոսներից յուրաքանչյուրի մասին: | . Վերարտադրի գրողի կենսագրությունը, պատկերացում կազմի ապրած դարաշրջանի վերաբերյալ: .Տարբերակի ստեղծագործություններից առավել հայտնիները: . Արտահայտի սեփական կարծիքը հերոսների վարքագծի, արարքների վերաբերյալ: .Նկարագրի միջավայրը, որտեղ կատարվում են դեպքերը: . Ներկայացնի մայրիկին՝ համեմատելով կենդանական աշխարհի մայրերի հետ: |
| | **Էջ** | **Դաս** |
| 3/1 | 197 | Հրանտ Մաթևոսյանի կյանքն ու ստեղծագործական ուղին |
| 3/2 | 201-210 | «Կանաչ դաշտը» պատմվածքը |
| 3/3 | 201-210 | «Կանաչ դաշտը» պատմվածքը |
| | | Արտադասարանական ընթ • |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| | .Ընկալել տալ թատերգության գաղափարական բովանդակության մասին: .Ծանոթացնել | .Վերարտադրի գրողի կենսագրության կարևոր փաստերն ու իրադարձությունները: .Վերարտադրի |

| | | |
|---|---|---|
| | ստեղծագործության ժանրին, նշել առանձնահատկությունները : .Ձևավորել տեքստի հիմնական ասելիքն առանձնացնելու կարողությունը: | թատերգության բովանդակությունը, շարադրի դեպքերի հաջորդականությունը, թվարկի հերոսներից մի քանիսին, բնութագրի: .Ցույց տա պատմվածքի և թատերգության ժանրային տարբերություններից կարևորագույնը: |
| | **Էջ** | **Դաս** |
| 4/1 | 212 | Վիլյամ Սարոյանի կյանքն ու ստեղծագործական ուղին |
| 4/2 | 217-243 | «Իմ սիրտը լեռներում է» թատերգությունը |
| 4/3 | 217-243 | «Իմ սիրտը լեռներում է» թատերգությունը |
| 4/4 | 244 | Թատերգություն: Մենախոսություն: Երկխոսություն |
| **Թեմա** | **Նպատակ** | **Վերջնարդյունքներ** |
| | .Ձևավորել հիմնավորված դիրքորոշում տեքստի գլխավոր հերոսի բնավորության, վարքագծի, կատարած քայլերի վերաբերյալ: . Ձևավորել տեքստի հիմնական և երկրորդական մտքերն առանձնացնելու կարողությունը: | .Վերարտադրի գրողի կենսագրության կարևոր փաստերն ու իրադարձությունները: .Բացահայտի պատմվածքի գլխավոր ասելիքը: .Վեր հանի հերոսի վարքագծի և կատարած քայլերի պատճառն ու հետևանքը: |
| **Ժամ** | **Էջ** | **Դաս** |
| 2/1 | 246 | Ջեկ Լոնդոնի կյանքն ու ստեղծագործական ուղին |
| 2/2 | 248-266 | «Ոսկե կիրճը» պատմվածքը |
| | | Թեմայի ամփոփում |
| | | |
| | | |

**Դաս 1 -** Եղիշե Չարենց, կենսագրական տեղեկություններ Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞ր դարում է ապրել և ստեղծագործել Եղիշե Չարենցը:

2. Արձակագի՞ր է, թե՞ բանաստեղծ Եղիշե Չարենցը:

3. Ի՞նչ վեպ է գրել Եղիշե Չարենցը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1.Իմանա, որ Եղիշե Չարենցը 20-րդ դարի գրող է:

2. Իմանա, որ Եղիշե Չարենցը բանաստեղծ է:

3. Իմանա, որ Եղիշե Չարենցը գրել է «Երկիր Նաիրի» վեպը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1. 1.Պետք է կարողանա նշել, թե որ դարի գրող է Ե. Չարենցը:

ա/18-րդ դար

բ/20

գ/17

2. Պետք է կարողանա տարբերակել, թե որոնք են չափածո ստեղծագործություններ.

ա/պոեմ

բ/բանաստեղծություն

գ/վեպ

դ/պատմվածք

3.Պետք է կարողանա առանձնացնել Ե. Չարենցի ստեղծագործությունները.

«Երկիր Նաիրի», «Երեք երգ տխրադալուկ աղջկան», «Ես իմ անուշ Հայաստանի», «Ալպիական մանուշակ»

**Դաս 2-** «Հայրենիքում» բանաստեղծությունը [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞ւմ մասին էր «Հայրենիքում» բանաստեղծության տեսիլքը:

2. Ինչպե՞ս է ավարտվում բանաստեղծությունը:

3. Ո՞ր ժողովածուում է զետեղված այս բանաստեղծությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1.Իմանա, որ «Հայրենիքում» բանաստեղծության տեսիլքը վերաբերում էր սիրած աղջկան:

2. Իմանա, որ բանաստեղծությունն ավարտվում է գիշերային պատկերով:

3. Իմանա, որ բանաստեղծությունը զետեղված է «Տեսիլաժամեր» ժողովածուում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1. Պետք է կարողանա նշել, թե որն է մակդիրը.

ա/ձյունապատ լեռներ

բ/մանկական աչքեր

գ/լճի մրմունջ

2. Պետք է կարողանա արձակ՝ 1-2 նախադասությամբ շարադրել բանաստեղծությունը:

3.Պետք է կարողանա ընդգծել այն ժողովածուն, որտեղ զետեղված է «Հայրենիքում» բանաստեղծությունը.

«Տեսիլաժամեր», «Գիրք ճանապարհի», «Ծիածան»

**Դաս 3 -** «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ե. Չարենցի բանաստեղծական ո՞ր շարքում է զետեղված «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը:
2. Ո՞ր լեռան մասին է հիշատակվում բանաստեղծության մեջ:
3. Միջնադարի որ բանաստեղծի պոեզիայի ոճավորումով է գրված «Տաղարան» շարքը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1.Իմանա, որ «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը զետեղված է բանաստեղծի «Տաղարան» շարքում:
2.Իմանա, որ բանաստեղծության մեջ հիշատակվում է Արարատ լեռը:
3.Իմանա, որ «Տաղարան» շարքը գրված է միջնադարի բանաստեղծ Սայաթ-Նովայի պոեզիայի ոճավորմամբ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1.Պետք է կարողանա ընդգծել մակդիրները.

Արևահամ բառ, լացակումած լար, նաիրյան աղջիկներ, արյունաքամ վերք:

2. Պետք է կարողանա մեկնաբանել, թե ո՞րն է Չարենցի համար «անհաս փառքի» խորհրդանշանը:

3.Պետք է կարողանա ասել, թե ովքե՞ր են բանաստեղծության մեջ հիշատակված Նարեկացին և Քուչակը:

**Դաս 4 -** «Տաղ անձնական» բանաստեղծությունը Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ինչո՞ւ բանաստեղծությունը վերնագրված «Տաղ անձնական»:
2. Ո՞վ էր Կարինե Քոթանճյանը Չարենցի կյանքում:
3. «Տաղ անձնական» տաղի մեջ ո՞ւմ կերպարն է ներկայացնում Ե. Չարենցը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1. Իմանա, որ Չարենցը բանաստեղծությունը վերնագրել է «Տաղ անձնական», որովհետև գրված է աշուղական տաղի ձևով:
2. Իմանա, որ Կարինե Քոթանճյանը Չարենցի սիրած աղջիկն էր, որին ձոնել է «Ծիածան» ժողովածուն:
3. Իմանա, որ «Տաղ անձնական» տաղի մեջ Չարենցը ներկայացնում է բանաստեղծի իր կերպարը ժամանակի մեջ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1.Պետք է կարողանա բացատրել ***մով***, ***վտարանդի***, ***կարոտակեզ*** բառերի իմաստները:
2. Պետք է կարողանա 2-3 նախադասությամբ վերարտադրել չափածոյի բովանդակությունը արձակ:
3. Պետք է կարողանա նշել, թե ում հրաժեշտ չէր տվել Չարենցը.
ա/ Կարինե Քոթանճյանին
բ/ իր ծնողներին
գ/ Արփենիկին

**Դաս 5 -** Դերենիկ Դեմիրճյան, կենսագրական տեղեկություններ Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ո՞ր դարաշրջանի գրող է Դերենիկ Դեմիրճյանը:
2. Ո՞ր գրական խմբակցության հիմնադիր անդամներից էր Դերենիկ Դեմիրճյանը:
3.Ո՞րն է Դերենիկ Դեմիրճյանի հայտնի պատմավեպը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1. Իմանա, որ Դերենիկ Դեմիրճյանը 20-րդ դարի գրող է:
2. Իմանա, որ Դերենիկ Դեմիրճյանը «Վերնատուն» գրական խմբակցության հիմնադիր անդամներից էր:
3. Իմանա, որ Դ. Դեմիրճյանի հայտնի պատմավեպն է «Վարդանանք»-ը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1. Պետք է կարողանա ընդգծել, թե որ դարի գրող է Դ. Դեմիրճյանը.

ա/18-րդ դար

բ/20-րդ

գ/19-րդ

2. Պետք է կարողանա նշված տարբերակներից առանձնացնել այն գրական խմբակցությունը, որի համահիմնադիր է եղել Դ. Դեմիրճյանը.
ա/ «Վերնատուն»
բ/ «Նոյեմբեր»
3. Պետք է կարողանա նշված տարբերակներից առանձնացնել Դեմիրճյանի ստեղծագործությունները.

***«Վարդանանք»*** ***«Ավելորդը»*** ***«Գիրք ծաղկանց»*** ***«Մթնաձոր»***

**Դաս 6 -** «Ավելորդը» պատմվածքը (Մաս 1) Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1.Ովքե՞ր են «Ավելորդը» պատմվածքի գլխավոր հերոսները:
2.Որտե՞ղ էին տեղի ունենում պատմվածքի գործողութունները:
3. Ո՞ր պատմական ժամանակաշրջանի դեպքերն են նկարագրվում պատմվածքում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1. Իմանա, որ «Ավելորդը» պատմվածքի գլխավոր հերոսներն են Հաճի աղան, նրա կինը, որդիները, հարսները և քույրը՝ Սրբունը:
2. Իմանա, որ պատմվածքի գործողությունները տեղի են ունենում Կարս քաղաքում:
3. Իմանա, որ պատմվածքում ներկայացվում են 1915 թվականի ռուս-թուրքական պատերազմի դեպքերը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1. Պետք է կարողանա 2-3 նախադասությամբ ներկայացնել պատմվածքի գլխավոր հերոսներին:
2. Պետք է կարողանա նշել, թե որտեղ են տեղի ունենում պատմվածքի գործողությունները.
ա/ Կարսում
բ/ Թիֆլիսում
գ/ Երևանում
3. Պետք է կարողանա նշել, թե ո՞ր ժամանակաշրջանի դեպքերն են նկարագրվում պատմվածքում.

ա/ 1877 թ. ռուս-տաճկական

բ/ 1915 թ. ռուս-թուրքական

**Դաս 7 -** «Ավելորդը» պատմվածքը (Մաս 2) Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Հարո՞ւստ էր արդյոք Հաճի աղան:
2. Ինչո՞վ էին զբաղվում Հաճի աղայի որդիները:

3. Ո՞վ էր Սրբունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1. Իմանա, որ Հաճի աղան շատ մեծ ունեցվածքի տեր էր և հարուստ:
2. Իմանա, որ Հաճի աղայի որդիները զբաղվում էին առևտրով:
3. Իմանա, որ Սրբունը Հաճի աղայի անդամալույծ քույրն էր:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1. Պետք է կարողանա 2-3 նախադասությամբ նկարագրել Հաճի աղայի սենյակը:
2. Պետք է կարողանա նշել, թե ինչ է **օդան.**

ա/ոտնաման
բ/սենյակ
գ/սահնակ
դ/փալան, ձիու մեջքին դնելու հարմարանք

3. Պետք է կարողանա նշել, թե Սրբունը ի՞նչ տվեց Հաճի աղային մեկնելուց առաջ.

ա/ ձեռնոց
բ/ անողին
գ/ սրբիչ

**Դաս 8 -** «Ավելորդը» պատմվածքը (Մաս 3) Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Քաղաքից փախչելիս Հաճի աղան ընտանիքի անդամներից ո՞ւմ չտարավ իր հետ:
2. Սրբունը ինչո՞ւ էր ապրում Հաճի աղայի տանը:
3. Զղջա՞ց արդյոք Հաճի աղան:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1. Իմանա, որ քաղաքից փախչելիս Հաճի աղան չի տանում իր անդամալույծ քրոջը՝ Սրբունին:
2. Իմանա, որ Սրբունին եղբայրն էր բերել իր տուն՝ անդամալույծ դառնալուց հետո:
3. Իմանա, որ պատմվածքի վերջում Հաճի աղան զղջաց իր արաքի՝ Սրբունին տանը թողնելու համար:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1.Պետք է կարողանա ասել, թե քաղաքից գաղթելիս Հաճի աղան ընտանիքի ո՞ր անդամին թողեց և իր հետ չտարավ.

ա/ Սրբունին

բ/ Շմավոնին

գ/ բոլորին տարավ

2. Պետք է կարողանա նշել, թե ինչ է **խզակը**.

ա/սահնակ
բ/ պարետ
գ/ գավազան

3. Պետք է կարողանա մեկնաբանել պատմվածքի վերջում Հաճի աղայի ասած խոսքերը.

«Ավելորդուն հոգուն համար»:

**Դաս 9 -** «Ավելորդը» պատմվածքը (Մաս 4) Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Սիրո՞ւմ էին տան անդամները Սրբունին:
2. Հաճի աղան ի՞նչ էր անում պատմվածքի վերջում իր խղճի հանգստության համար:
3. Ինչո՞վ գաղթեց Հաճի աղայի ընտանիքը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1. Իմանա, որ տան բոլոր անդամները շատ սիրում էին Սրբունին:
2. Իմանա, որ պատմվածքի վերջում Հաճի աղան ապաշխարում է և գումար տալիս աղքատներին:
3. Իմանա, որ Հաճի աղայի ընտանիքը քաղաքից գաղթում է խզակով:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1.Պետք է կարողանա ասել, թե ովքեր էին Հաճի աղայի որդիները և 2-3 նախադասությամբ բնութագրի նրանց:
2. Պետք է կարողանա ասել, թե Հաճի աղան պատմվածքի վերջում ո՞ւր էր գնում իր հոգու հանգստության համար.
ա/ եկեղեցի
բ/ տնից դուրս չէր գալիս
գ/գերեզմանատուն
3. Պետք է կարողանա նշել, թե ինչ է նշանակում **ղայֆա** բառը:

ա/ նիհար
բ/ սուրճ
գ/թեյ

**Դաս 10 -** Ստեփան Զորյանի կյանքն ու ստեղծագործական ուղին Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞ր դարում է ապրել և ստեղծագործել Ս. Զորյանը:

2. Արձակագի՞ր է, թե՞ բանաստեղծ Ս. Զորյանը:

3. Ի՞նչ ստեղծագործություններ են քեզ ծանոթ Ս. Զորյանից:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.1.Իմանա, որ Զորյանը 20-րդ դարի գրող է:

2. Իմանա, որ Ս. Զորյանը արձակագիր է:

3. Իմանա, որ Զորյանը գրել է «Մի կյանքի պատմություն» վեպը, «Տխուր մարդիկ» պատմվածքների ժողովածուն:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1.Պետք է կարողանա նշել, թե որ դարի գրող է Ս. Զորյանը.

ա/18-րդ դար

բ/20

գ/17

2. Պետք է կարողանա նշել, թե որոնք են արձակ ստեղծագործություններ.

ա/պոեմ

բ/բանաստեղծություն

գ/վեպ

դ/պատմվածք

3.Պետք է կարողանա առանձնացնել Զորյանի ստեղծագործությունները.

«Ջրհորի մոտ», «Մի կյանքի պատմություն», «Ավելորդը», «Կանաչ դաշտը»

**Դաս 11 - «**Ջրհորի մոտ» պատմվածքը (Մաս 1) Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**.

1.Ե՞րբ են կատարվում պատմվածքում նկարագրվող դեպքերը:

2.Ո՞վ է Բաղդասարը և ո՞ր ճակատում էր կռվում:

3.Ի՞նչն է դառնում հակառակորդ զինվորների հաշտության պատճառը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1.Իմանա, որ պատմվածքում նկարագրվող դեպքերը տեղի են ունենում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ:

2. Իմանա, որ Բաղդասարը հայ զինվորներից մեկն էր և կռվում էր ռուսական զորքի կազմում:

3. Իմանա, որ հակառակորդ զինվորների հաշտության պատճառը նույն ջրհորից ջուր վերցնելն է:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1.Պետք է կարողանա տրված տարբերակներից առանձնացնել Առաջին համաշխարհային պատերազմը:

ա/ 1914թ.

բ/ 1918 թ.

գ/1939 թ.

2. Պետք է կարողանա ասել, թե Բաղդասարը բարբառո՞վ է խոսում, թե՞ գրական հայերենով:

3 Պետք է կարողանանշել, թե ռուսական զորքը ո՞ր զորքի հետ էր կռվում.

ա/ավստրիացիների

բ/թուրքերի

գ/ ամերիկացիների

**Դաս 12 -** «Ջրհորի մոտ» պատմվածքի կերպարները (Մաս 2) Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ո՞վ է պատմվածքի գլխավոր հերոսը:

2.Գիտե՞ր Բաղդասարը, թե ինչի համար էր մասնակցում պատերազմին:

3.Ի՞նչ լեզվով էր խոսում Բաղդասարը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Իմանա, որ պատմվածքի գլխավոր հերոսը Բաղդասարն է:

2. Իմանա, որ Բաղդասարը տեղյակ չէր, թե ինչ նպատակով է մասնակցում պատերազմին:

3. Իմանա, որ Բաղդասարը խոսում էր բարբառով:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պետք է կարողանա 2-3 նախադասությամբ բնութագրել Բաղդասարին:

2. Պետք է կարողանա մեկ նախադասությամբ բնորոշել, թե Ի՞նչ էր պատերազմը Բաղդասարի պատկերացմամբ:

3. Պետք է կարողանա հիշել 2-3 բարբառային բառ, որ գործածվում է պատմվածքում:

**Դաս 13** - Ակսել Բակունցի կյանքն ու ստեղծագործական ուղին Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞ր դարում է ապրել և ստեղծագործել Բակունցը:

2. Արձակագի՞ր է, թե՞ բանաստեղծ Բակունցը:

3. Ի՞նչ ժողովածուներ ունի Բակունցը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1.Իմանա, որ Բակունցը 20-րդ դարի գրող է:

2. Իմանա, որ Ա.Բակունցն արձակագիր է:

3. Իմանա, որ Բակունցի պատմվածքներն ամփոփված են «Մթնաձոր», «Սև ցելերի սերմնացան», «Անձրև» ժողովածուներում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1.Պետք է կարողանա նշել, թե որ դարի գրող է Բակունցը.

ա/18-րդ դար

բ/20

գ/17

2. Պետք է կարողանա տարբերակել, թե որոնք են արձակ ստեղծագործություններ.

ա/պոեմ

բ/բանաստեղծություն

գ/վեպ

դ/պատմվածք

3.Պետք է կարողանա առանձնացնել Բակունցի ստեղծագործությունները.

«Ջրհորի մոտ», «Միրհավ», «Ավելորդը», «Ալպիական մանուշակ»

**Դաս 14** - «Սպիտակ ձին» պատմվածքը (Մաս 1) Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. ՈՒ՞մ խոսքով է սկսվում «Սպիտակ ձին» պատմվածքը:

2.Ո՞ր ձայնը խլացրեց եկեղեցու զանգերից հասնող ծանոթ ու հարազատ ղողանջները:

3.Ովքե՞ր էին ընտանիքի երեխաները:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1.Իմանա, որ պատմվածքում հանդիպող առաջին կերպարը Շարմաղ բիբին է: Նա փառք է տալիս, որ եկեղեցու զանգերը «էսօր էլ զարկին»:

2. Իմանա, որ այդ խռպոտ ձայնը բոթ էր գուժում. առավոտ շուտ ձիատերերն իրենց ձիերին քաղաք պետք է տանեին:

3. Իմանա, որ պատմվածքում հիշատակվող ընտանիքի երեխաները Շողերն ու Երեմն էին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1. Պետք է կարողանա ասել՝ ընտանիքի անդամներից ումն են բիբի անվանել.

   ա/ հորաքրոջը

   բ/մորը

   գ/ տատին

   դ/ տան երիտասարդ աղջկան

2. Պետք է կարողանա ասել, թե ով էր հրաման տվել, որ ձիերը հավաքեն:

3 Պետք է կարողանա նշել, թե ինչ էր նրանց ձիու անունը.

ա/սպիտակ ձի

բ/Ցոլակ

գ/ կապտավուն ձի

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Սիմոնը Ցոլակին գնելիս ի՞նչ էր տվել տեղը:

2.Ո՞վ էր Սաքու տղան:

3.Գյուղում ի՞նչ անունով էր հայտնի Շուղունց Ալեքը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1. Իմանա, որ Սիմոնը Ցոլակին գնել էր երկու տարի առաջ՝ տեղը տալով իրենց էշը, մի անմայր հորթ, կարպետ և երկու բեռ ցորեն:

2. Իմանա, որ Սաքու տղան Սիմոնենց հարևանն էր: Նա էլ Սիմոնի հետ իր ձին քաղաք էր տանում:

3. Իմանա, որ գյուղացիները Շուղունց Ալեքին տվել էին «աղվես խեղդող» մականունը երիտասարդ հասակում ձեռքով աղվես խեղդելու պատճառով:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1.Պետք է կարողանա նշել, որ (ըստ Սիմոնի լսած տեղեկությունների) ձիերին պատերազմ տանելիս ի՞նչն էին առաջնային համարում.

ա/բոյը

բ/ առողջ լինելը

գ/գիրությունը

դ/ անունը

2. Պետք է կարողանա մեկ նախադասությամբ բնորոշել, թե ինչ հոգեվիճակով Սիմոնը լուսացրեց գիշերը, երբ ստացավ Ցոլակին քաղաք տանելու լուրը:

3. Պետք է կարողանա հիշել՝ ճանապարհին ձիատերերից ով անիծեց աստծուն.

ա/Սիմոնը

բ/շիլ Իվանը

գ/Սաքու տղան

դ/ ոչ մեկը

**Դաս 16** - «Սպիտակ ձին» պատմվածքը (Մաս 3) Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1.Ո՞վ էր սպիտակ ձիու տերը:

2.Ո՞վ և ինչպե՞ս էր որոշում՝ ձիուն տանո՞ւմ են, թե՞ ոչ:

3. Սիմոնին հանդիպած թուրք ծանոթն ինչպե՞ս բացատրեց, թե ձիերից որոնց չէին տանում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1.Իմանա, որ սպիտակ ձին Կոստանդ աղայի ձին էր:

2. Իմանա, որ պրիստավը նշան էր անում. եթե նշանը բազմության կողմն էր, ուրեմն ձիուն տիրոջն էին հանձնում. անպետք էր պատերազմի համար: Իսկ եթե նշանը ռուս զինվորներին էր ուղղված, ապա նրանք մոտենում էին, նոր սանձ հագցնում ձիու գլուխը, հինը գցում տիրոջ կողմը ու ձիուն հանձնում ուրիշ զինվորների:

3. Իմանա, որ ըստ Սիմոնի վաղուցվա «ճանաչ» թուրքի՝ ազատվում են միայն այն ձիերը, որոնց ոտքը պետք է կոտրած լինի, կամ վրան խորը վերք լինի:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1. Պետք է կարողանա նշել, թե ինչ է **համետը.**

ա/ոտնաման

բ/զենքի տեսակ

գ/ձիու ցեղատեսակ

դ/փալան, ձիու մեջքին դնելու հարմարանք

2. Պետք է կարողանա նշել, թե ով է **պրիստավը**:

3. Պետք է կարողանա մի քանի նախադասությամբ մեկնաբանել՝ ինչ է ձին գյուղացու համար:

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ձիուն փրկելու համար ի՞նչ քայլի դիմեց Սիմոնը:

2. Ձիու վերքից թափվող արյան քանակը տեսնելով՝ ի՞նչ մտածեց Սիմոնը:

3. Ինչու՞ Սիմոնը կատարեց այդ «հանցանքը»:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1. Իմանա, որ Սիմոնը Ցոլակին ջուր տալու պատրվակով տարավ գետը, կապեց ձիու ոտքերը և չեչաքարով վնասեց ձիու մեջքը:

2. Իմանա, որ ձիու մեջքին վերք բացելուց հետո Սիմոնը, երբ տեսավ ջուրը արնագույն է դառնում, մտածեց. «Չլինի՞ տամար տրաքեց»:

3. Իմանա, որ Սիմոնն այդ քայլին գնաց՝ հույս ունենալով, որ այդպես կկարողանա փրկել ձիուն:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1. Պետք է կարողանա հիշել՝ որտեղ և ինչով Սիմոնը վնասեց Ցոլակի մեջքը:

2. Պետք է կարողանա նշել՝ ինչ է **տամարը**.

ա/դանակ

բ/կոշիկ

գ/երակ

դ/զենքի տեսակ

3. Պետք է կարողանա 2-3 նախադասությամբ գրավոր բնութագրել Սիմոնի հոգեվիճակը ձիու մեջին վերք բացելու պահին:

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1.Ձիերը հավաքելու ժամանակ ի՞նչ արտասովոր դեպք տեղի ունեցավ հրապարակում:

2.Ի՞նչ պատահեց կապտավուն ձիու հետ:

3.Կոստանդ աղան ի՞նչ ձիով ներկայացավ, տարա՞ն նրա ձիուն:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1. Իմանա, որ զինվորները փորձում էին բռնել կապտավուն ձիուն, բայց չէր ստացվում:

2. Իմանա, որ կապտավուն նժույգը փորձ էր արել անցնել փշալարի վրայով, բայց ընկել էր լարի երկաթյա սուր փշերի վրա, վնասել կուրծքն ու մեջքը և մահացել էր:

3. Իմանա, որ Կոստանդ աղան առաջ եկավ լղար, մեջքը փոս ընկած, մոխրագույն մի ձիու հետ: Նրան ձեռքով նշան արեցին, որ հեռանա:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1. Պետք է կարողանա 2-3 նախադասությամբ նկարագրել կապտավուն ձիուն բռնելու զինվորների անհաջող փորձերի դրվագը:

2. Պետք է կարողանա նշել, թե ինչ է նշանկում **լղար** բառը:

ա/ նիհար

բ/ գեր

գ/հիվանդ

դ/առողջ

3. Պետք է կարողանա մեկնաբանել՝ գյուղացիների համար զարմանալի՞ էր, որ Կոստանդ աղայի ձիուն չտարան:

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1.Վիրավորում ստացած Ցոլակին տարա՞ն պատերազմ, թե՞ ոչ:

2.Ետ դառնալիս ի՞նչ միտք էր ծանրացնում Սիմոնի հոգին, ինքն ի՞նչ բառերով էր բնութագրում իր արարքը:

3.Ինչո՞ւ է պատմվածքը վերնագրված «Սպիտակ ձին», ոչ թե «Ցոլակը»:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1.Իմանա, որ Ցոլակին տարան՝ հասկանալով ու նախատելով Սիմոնին իր այդ արարքի համար:

2. Իմանա, որ Սիմոնը մեղադրում էր իրեն՝ ասելով. «Հենց իմ փիսությունը մնաց, Ցոլա՛կ...»:

3.Իմանա, որ սպիտակ ձին ամենաշքեղն էր ու գեղեցիկը և իրենով խորհրդանշում էր ձիերի հանդեպ գրողի վերաբերմունքը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1. Պետք է կարողանա ասել, երբ անսանաբույժի աչքով ընկավ Ցոլակի վերքը, այդ պահին ի՞նչ անցավ Սիմոնի մտքով.

ա/ «Տանելու են»

բ/ «Չտարան»

գ/ «Վերքը կբուժեն»

դ/ «Գաղտնիքը կբացահայտեն»

2. Պետք է կարողանա նշել՝ ձիերից քանի՞սն էին ազատվել.

ա/ մեկը

բ/ոչ մեկը

գ/ութը

3. Պետք է կարողանա նշել՝ պատմվածքում պատկերված-կերպավորված են քանի՞ ձի.

ա/ Ցոլակը

բ/կապտավուն ձին

գ/սպիտակ ձին

դ/ երեքն էլ

**Դաս 20** - Նաիրի Զարյանի կյանքն ու ստեղծագործական ուղին [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**.

1. Ն. Զարյանն Արևմտյան Հայաստանու՞մ է ծնվել, թե՞ Արևելյան Հայաստանում:

2. Ցեղասպանությունից հետո որտե՞ղ է ապաստանել Ն.Զարյանը:

3. Ո՞ր դիցապատմական ողբերգությունն է գրել Ն.Զարյանը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Իմանա, որ Ն.Զարյանը ծնվել է Արևմտյան Հայաստանում՝ Վանի Խառակոնիս գյուղում:

2. Իմանա, որ ցեղասպանությունից հետո ապաստանել է Երևանի և Դիլիջանի որբանոցներում:

3. Իմանա, որ Ն.Զարյանը գրել է «Արա Գեղեցիկ» դիցաբանական ողբերգությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1.Պետք է կարողանա ընտրել ճիշտ տարբերակը՝ նշելով Զարյանի ծննդավայրը.

ա/ Խառակոնիս

բ/ Օշական

գ/Ոսկեվազ

2.Պետք է կարողանա ընտրել ճիշտ տարբերակը՝ նշելով որբ մնացած Զարյանի հանգրվանը.

ա/Երևանի

բ/Էջմիածնի

գ/Գյումրու որբանոցում

3.Պետք է կարողանա ասել, թե ով է «Արա Գեղեցիկի» գլխավոր հերոսը.

ա/Արշակ թագավորը

բ/Շապուհը

գ/Արա Գեղեցիկ

**Դաս 21** – «Հայրենի տուն» բանաստեղծությունը Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1.Ի՞նչ զգացում է արտահայտում բանաստեղծությունը:
2.Ինչու՞ է հայրենի տունը գրողը տեսնում երազի մեջ:
3.Ինչու՞ է նա երազը բնորոշում «անուշ» մակդիրով և աշխարհը համարում «քաղցր ու հասկանալի»:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Իմանա, որ բանաստեղծն արտահայտում է կարոտի զգացում:
2. Իմանա, որ գրողը հայրենի տունը տեսնում է երազի մեջ, որովհետև կարոտում է իր ծննդավայրը:
3. Իմանա, որ նա երազը բնորոշում է «անուշ» մակդիրով, որովհետև հայրենի տունը փոխակերպվում է մոր հետ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պետք է կարողանա ընտրել ճիշտ տարբերակը, թե ինչու է հեռացել ծննդավայրից.
ա/ ցեղասպանության պատճառով
բ/ Հայրենական մեծ պատերազմի պատճառով
գ/ Արցախյան գոյամարտի պատճառով

2.Պետք է կարողանա բացատրել, թե մոր կերպարի հետ հայրենիքը ինչի մեջ է փոխակերպվում.
ա/ երազի
բ/շրջագայության
գ/կերուխումի

3.Պետք է կարողանա ասել, թե ինչ է նշանակում «անուշ» բառը.
ա/ սիրելի
բ/ ատելի
գ/ հեռավոր

**Դաս 22** – «Հայերեն» բանաստեղծությունը Թեմատիկ պլանավորում

1. Ե՞րբ և ո՞րտեղ է Ն.Զարյանը գրել «Հայերեն» բանաստեղծությունը:

2. Ի՞նչն է պատճառը, որ հայ աղջիկը չի խոսում հայերեն:
3. Ինչպե՞ս է բանաստեղծը ներկայացնում հայուհու գեղեցկությունը: Ինչի՞ հետ է համեմատում նրան:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Իմանա, որ Ն.Զարյանը «Հայերեն» բանաստեղծությունը գրել է 1941թ.-ին, Մոսկվայում:
2. Իմանա, որ սփյուռքում ապրելով` հայ աղջիկը չի խոսում հայերեն:
3. Իմանա, որ բանաստեղծը գեղեցկուհի հայուհուն անվանում է «հայոց լեռներեն իջած թեթևոտ պախրա»:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պետք է կարողանա ըմբռնել, որ այս բանաստեղծությունը բնութագրում է հայկական արմատներից հեռացած, արտերկրում ապրող հայ մարդուն:
2. Պետք է կարողանա հասկանալ, որ այս բանաստեղծությունը հայերեն խոսելու կոչ է հռետորական հարցի միջոցով:
3. Պետք է կարողանա ասել, թե ինչ նշանակում *պախրա* բառը.

ա/ եղնիկ  բ/առյուծ  գ/հովազ

**Դաս 23** – Գուրգեն Մահարու կյանքն ու ստեղծագործական ուղին  Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1.Ո՞ր քաղաքում է ծնվել Գ.Մահարին:
2.Ինչու՞ է աքսորվում Սիբիր:
3.Ի՞նչ նշանավոր երկերի հեղինակ է Գ.Մահարին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Իմանա, որ Գ.Մահարին ծնվել է Վան քաղաքում:
2. Իմանա, որ Մահարին Սիբիր է աքսորվում ստալինյան բռնապետության տարիներին ազգային մտածելակերպի համար:
3. Իմանա, որ «Այրվող այգեստաններն» և «Ծաղկած փշալարերը» Մահարու առավել հայտնի ստեղծագործություններից են:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պետք է կարողանա նշել, թե որն է Հայաստանի հին մայրաքաղաքներից.
ա/ Վան   բ/ Բիթլիս   գ/ Գյուլագարակ

2. Պետք է կարողանա նշել, թե որ գրողն է ստալինյան բռնապետության տարիներին անհիմն մեղադրվել դավաճանության մեջ.
ա/ Ն.Զարյան   բ/ Ակս. Բակունց   գ/ Գ.Աբով:

3. Պետք է կարողանա նշել, թե որ վեպն է պատմում Վան քաղաքի բնակիչների մասին.
ա/ «Այրվող այգեստաններ»
բ/ «Ծաղկած փշալարեր»
գ/ «Մրգահաս»

**Դաս 24** – «Ինքնակենսագրական» (կրճատումներով)  Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1.Ի՞նչ է Գ.Մահարու տատի անունը և ինչպե՞ս էին դիմում նրան հարևանները:
2.Ի՞նչ բարբառով էր խոսում տատը:
3.Պատանեկությունը ո՞րտեղ է անցկացրել Գ.Մահարին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Իմանա, որ Մահարու տատի անունը Յուղաբեր էր, իսկ հարևան կանայք Օղիկ էին ասում:
2. Իմանա, որ տատը խոսում էր Վանի բարբառով:
3. Իմանա, որ Գ.Մահարին պատանեկությունն անցկացրել է Էջմիածնի, Երևանի, Դիլիջանի որբանոցներում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պետք է կարողանա ասել, թե որ անունն էր նախընտրում Մահարին՝ Յուղաբե՞ր, թե Օղիկ:
2.Պետք է կարողանա ասել, թե Վանի բարբառը արևելահայերե՞ն է, թե արևմտահայերեն:
3.Պետք է կարողանա նշել, թե Գ.Մահարին առաջին բանաստեղծությունը՝ «Հայրենիք» վերնագրով, որտե՞ղ է գրել.
ա/ տանը
բ/ որբանոցում

**Դաս 25** – «Բալլադ Չալոյի և առաջին սիրո մասին» Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1.Ի՞նչ է բալլադը:

2.Ինչի՞ մասին է Չալոյի և առաջին սիրո մասին պատմող բալլադը:

3.Ո՞վ փոխարինեց Չալոյին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Իմանա, որ բալլադը ոչ մեծ ծավալի գրական ստեղծագործություն է, որի հիմքը կարող է լինել լեգենդ, ավանդույթ կամ արտասովոր դեպք:

2. Իմանա, որ այս բալլադն իր առաջին սիրո՝ Չալոյի մասին է:

3. Իմանա, որ Չալոյին փախարնեց երկրորդ սերը՝ խաժ աչքերով, ոսկեգույն մազերով մի աղջիկ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պետք է կարողանա նշել, թե նշվածներից որն է բալլադ.

ա/ «Փարվանա»

բ/ «Անուշ»

գ/ «Գիքորը»

2. Պետք է կարողանա նշել, թե ով է բանաստեղծի առաջին սերը.

ա/ Չալոն

բ/ մի աղջիկ

3.Պետք է կարողանա նշել, թե ում է հիշեցնում Գ. Մահարու երկրորդ սերը.

ա/ առաջին սիրուն

բ/ իր ծնողներին

գ/ տատին

**Դաս 26** – «Օրոր, Օրոր» բանաստեղծությունը Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Բանաստեղծն ու՞մ է ասում «Օրոր, օրոր»:
2. Անձնական ապրումը և բնության պատկերներն ինչպե՞ս են զուգակցվում բանաստեղծության մեջ:
3. Թվարկել այն ամենը, ինչին բանաստեղծն օրոր է ասում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Իմանա, որ բանաստեղծն օրոր է ասում իր սերերին, հույզերին, լույսերին:
2. Իմանա, որ անձնական ապրումը և բնության պատկերները բալլադի մեջ լրացնում են իրար:
3. Իմանա, որ բանաստեղծն օրոր է ասում արևավոր իր սերերին, հույզերին, լուսավոր հույսերին, լայնասաղարթ ընկուզենուն, մարգին, ծառին, ձորին, բարդուն, կածաններին և այլն:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պետք է կարողանա նշել, թե իր սերերին ինչպես է անվանում բանաստեղծը.
ա/ արևավոր
բ /լուսնյակ
գ/ աստղավոր

2. Պետք է կարողանա նշել, թե ինչ է նշանակում բալլադ.
ա/պարերգություն
բ/երգ
գ/պար

3. Պետք է կարողանա նշել, թե ինչ թեմայով է գրված բալլադը.
ա/օրորոցային
բ/հայրենասիրական
գ/մայրական սիրո

**Դաս 27** - Հովհաննես Շիրազի կյանքն ու ստեղծագործական ուղին [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞ր դարում է ապրել և ստեղծագործել Հովհ. Շիրազը:
2. Բանաստե՞ղծ է, թե արձակագիր Հովհ. Շիրազը:
3. Ի՞նչ ստեղծագործություններ են քեզ ծանոթ Հովհ. Շիրազից:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1. Իմանա, որ Շիրազը 20-րդ դարի բանաստեղծ է:
2. Իմանա, որ Շիրազը բանաստեղծ է:
3. Իմանա, որ Շիրազի հիմնական ժողովածուներն են՝ «Քնար Հայաստանի», «Հուշարձան մայրիկիս»:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պետք է կարողանա նշել, թե որ դարի գրող է Հովհ. Շիրազը.
   ա/19-րդ դար
   բ/21-րդ դար
   գ/20-րդ դար
2. Պետք է կարողանա նշել, թե որոնք են չափածո ստեղծագործություններ.
   ա/ վեպ
   բ/ պոեմ
   գ/ պատմվածք
   դ/ բանաստեղծություն
3. Պետք է կարողանա առանձնացնել Շիրազի ստեղծագործությունները.

ա/ «Օրոր, օրոր»   բ/ «Էքսպրոմտ»  գ/«Տաղ անձնական»   դ/ «Թագադրում»

**Դաս 28** - «Թագադրում» բանաստեղծությունը [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ է նշանակում թագադրում:
2. Տարվա ո՞ր եղանակն է նկարագրում հեղինակը:
3. Բանաստեղծության ո՞ր բառերն են առնչվում գարնանամուտի հետ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Իմանա, որ թագադրել թագը գլխին դնել, թագավոր դառնալ է նշանակում:
2. Իմանա, որ այս բանաստեղծության մեջ հեղինակը նկարագրում է գարունը:
3. Իմանա, որ տարվա յուրաքանչյուր եղանակ ունի իրեն բնորոշ բառեր ու արտահայտություններ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պետք է կարողանա բանաստեղծության մեջ գտնել և ասել, թե իբրև թագ ի՞նչն է իր գլխին դնում հեղինակը և ի՞նչն է թագավորում:
2. Պետք է կարողանա բանաստեղծությունից դուրս գրել գարնանը բնորոշող բառերը:
3. Պետք է կարողանա տարվա եղանակները բնութագրող բառերը համախատասխանաբար տեղադրել սյունակներում.

*ձնծաղիկ, ոսկեզօծ, ցրտաշունչ, արևահատ, բերքառատ, ձյունաճերմակ, արևակեզ, ծիծեռնակ*

| գարուն | ամառ | աշուն | ձմեռ |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |

**Դաս 29**-«Հայ ժողովրդի երգը» բանաստեղծությունը [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ըստ բնույթի՝ ինչպիսի՞ բանաստեղծություն է «Հայ ժողովրդի երգը»:
2. Բացի Շիրազից քեզ ծանոթ ո՞ր հեղինակներն են հայրենասիրական բանաստեղծություններ գրել:
3. Ո՞ր երգերն են կոչվում ժողովրդական:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Իմանա, որ «Հայ ժողովրդի երգը» հայրենասիրական բանաստեղծություն է:

2. Իմանա, որ հայրենասիրական բանաստեղծություններ գրել են Նաիրի Զարյանը, Եղիշե Չարենցը և այլոք:

3. Իմանա, որ ոչ անհատի, այլ ժողովրդի կողմից հյուսված երգերը կոչվում են ժողովրդական:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1. Պետք է կարողանա տարբերել հայրենասիրական բանաստեղծությունները մյուս թեմաներով գրված չափածո ստեղծագործություններից:
2. Պետք է կարողանա հետևյալ շարքում ընդգծել և առանձնացնել բանաստեղծների անունները արձակագիրների անուններից.
ա/ Դ.Դեմիրճյան  բ/Ե.Չարենց  գ/Ս.Զորյան  դ/Հ.Շիրազ
3. Պետք է կարողանա նշել, թե ժողովրդական երգեր լսելիս ում կամ ինչ է պատկերացնում. *ա/հայրենիքը  բ/դպրոցը  գ/սարերը  դ/դասընկերներին*

**Դաս 30** - «Էքսպրոմտ» բանաստեղծությունը [Թեմատիկ պլանավորում]

## Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ է նշանակում էքսպրոմտ:
2. Ո՞ւմ է դիմում հեղինակը՝ «դուք» ասելով:
3. Ինչո՞ւ է հայ ժողովուրդը հավերժ իր լեռների պես:

## Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ էքսպրոմտ նշանակում է հանպատրաստից, հանկարծակի գրված ստեղծագործություն:
2. Իմանա, որ «դուք» ասելով՝ հեղինակն ի նկատի ունի բոլոր նրանց, ովքեր պատերազմ են սանձազերծում հայ ժողովրդի դեմ:
3. Իմանա, որ լեռան պես կանգուն ու անսասան է հայ ժողովուրդը:

## Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա էքսպրոմտը տարբերել մնացած չափածո ստեղծագործություններից:
2. Պետք է կարողանա նշել, թե չար ոսոխին ո՞ւմ կամ ինչի՞ հետ է համեմատում հեղինակը.
   ա/ լեռների պես
   բ/ վայրագ
   գ/ հողմերի պես
3. Պետք է կարողանա տրված հատվածներում ընդգծել համեմատությունները.

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ:

Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես ոռնացիք վայրագ:

Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչիք վայրագ:

**Դաս 31** -«Կտակ» բանաստեղծություն [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1.՞Նչ է նշանակում կտակ և ի՞նչ է կտակում բանաստեղծը որդուն:

2. Այլ կերպ ի՞նչ են անվանում Մասիս սարին:

3.Ինչո՞ւ է Արարատը համարվում սուրբ սար:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Իմանա, որ կտակը ծնողից զավակին փոխանցվող ժառանգությունն է, և բանաստեղծը որդուն կտակում է Մասիս սարը:

2. Իմանա, որ Արարատը երկգագաթ է. մեծը կոչվում է *Մասիս*, փոքրը՝ *Սիս:*

3. Իմանա, որ համաշխարհային մեծ ջրհեղեղի ժամանակ Նոյն իր տապանով բարձրացավ Արարատի գագաթը, և մարդկությունը փրկվեց:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պետք է կարողանա բացատրել, թե Մասիս սարը որդուն կտակելով՝ ում գերությունից է կոչ անում այն ազատել:

2. Պետք է կարողանա պատկերել կամ լուսանկարի վրա ցույց տալ երկգագաթ Արարատի մեծ և փոքր սարերն ու ասել անվանումները:

3. Պետք է կարողանա «Աստվածաշունչ» մատյանից ընթերցել ու պատմել «Նոյը տապան է կառուցում» հատվածը:

**Դաս 32**–Հ. Սահյանի կյանքն ու ստեղծագործական ուղին: «Ծովն էր, գիշերն էր…» բանաստեղծությունը [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞ր դարաշրջանի բանաստեղծ է Համո Սահյանը:

2. Ինչպե՞ս  է կոչվում Սահյանի առաջին գիրքը:

3. Բնույթով ինչպիսի՞ բանաստեղծություն է «Ծովն էր, գիշերն էր» բանաստեղծությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Իմանա, որ Սահյանը 20-րդ դարի բանաստեղծ է:
2. Իմանա, որ Հ. Սահյանի առաջին գիրքը կոչվում է «Որոտանի եզերքին»:
3. Իմանա, որ «Ծովն էր, գիշերն էր» բանաստեղծությունը բնույթով սիրային է:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պետք է կարողանա ընդգծել այն հեղինակների անունները, որոնք ծնվել և ստեղծագործել են 20-րդ դարում.

*Մ. Գոշ, Գ. Մահարի, Մ. Խորենացի, Հ. Շիրազ, Հ. Սահյան*

2. Պետք է կարողանա տարբերել արձակագիր հեղինակներին բանաստեղծներից՝ համապատասխանաբար տեղադրելով սյունակներում.

*Ակս. Բակունց, Հ. Շիրազ, Դ. Դեմիրճյան, Հ. Սահյան*

| բանաստեղծ | արձակագիր |
|---|---|
| | |
| | |

3. Պետք է կարողանա բացատրել, թե ինչպիսի զգացողություններ է իր մեջ արթնացնում *ծովը, գիշերը, աստղերը:*

**Դաս 33** -«Ուր որ նայում եմ» բանաստեղծությունը Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարում ստուգելու համար.**

1. Ինչո՞ւ է Հայաստանը համարվում քարերի երկիր:
2. Փոխաբերական իմաստով քարին վերագրվող քանի՞ հատկանիշ է թվարկում հեղինակը:
3. Ինչո՞ւ է խաչքարը համարվում Հայաստանի խորհրդանիշներից մեկը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Իմանա, որ Հայաստանը լեռներով, քարափներով, ժայռերով լի քարաստան է` քարերի երկիր:
2. Իմանա, որ բանաստեղծության մեջ հեղինակը թվարկում է առնվազն 30-35 հատկանիշներ, որոնք վերագրվում են *քար* բառին:
3. Իմանա, որ խաչքարագործության արվեստի ստեղծողները եղել են հայերը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պետք է կարողանա թվարկել Հայաստանը բնորոշող քարակերտ կառույցների` եկեղեցիների, հուշակոթողների, հուշարձանների անվանումներ:
2. Պետք է կարողանա քար բառի և տրված բառերի կցումով ստանալ բարդ բառեր և բացատրել դրանց իմաստը.

քար — սիրտ
քար — (ա) գիր
քար — (ա) գործ

3. Պետք է կարողանա տրված բառաշարքում ընդգծել Հայաստանը խորհրդանշող բառերը.

*եռագույն, բազմագույն, խաչքար, նռնաքար, դեղձ, ծիրան, Նեմրութ, Արարատ*

**Դաս 34** -«Անունդ տալիս» բանաստեղծությունը Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ի՞նչ պատկերներ է հիշում հեղինակը Հայաստան անունը լսելիս. նշել դրանցից 3-ը:
2. Ի՞նչ է նշանակում *մատուռ*:
3. Ինչո՞ւ է Հայաստան անունը լսելիս հեղինակը *թոնիր* հիշում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Իմանա, որ Հայաստան անունը լսելիս հեղինակը հիշում է հոգեհարազատ պատկերներ` հայրական *տուն, մատուռ, թոնիր:*

2. Իմանա, որ մատուռը սրբավայր է, փոքր աղոթատեղի:

3. Իմանա, որ գյուղական վայրերում հացը թխում են գետնափոր թոնիրներում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պետք է կարողանա թվարկել, թե ինքն ինչ հոգեհարազատ պատկերներ է հիշում իր հայրենիքը հիշելիս:

2. Պետք է կարողանա մատուռ բառի համար մեկ հոմանիշ ասել:

3. Պետք է կարողանա թվարկել մի քանի հայկական հացատեսակի անուններ և դրանցով կազմել նախադասություններ:

**Դաս 35** -«Իմ քարափներն ու ես» բանաստեղծությունը[Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ե՞րբ է լույս տեսել «Իմ քարափներն ու ես» բանաստեղծությունը:
2. Ի՞նչ է նշանակում պատարագ:
3. Արդյո՞ք կատարվել է բանաստեղծի ցանկությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Իմանա, որ այս բանաստեղծությունը լույս է տեսել բանաստեղծի մահից հետո:
2. Իմանա, որ պատարագը քրիստոնեական եկեղեցու արարողություն է, ժամերգություն:
3. Իմանա, որ բանաստեղծի ցանկությունը կատարվել է:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պետք է կարողանա առանձնացնել Համո Սահյանի բանաստեղծությունները.
ա/ «Ուր որ նայում եմ» բ/ «Կտակ» գ/«Անունդ տալիս» դ/ «Հայրենի տուն» ե/ «Էքսպրոմտ»
2. Պետք է կարողանա տրված քառատողերում ընդգծել փոխաբերությունները.

Ձեր լռությունը զնգում,
Չրնգում է ծորով մեկ,
Ձեր լռության համերգում
Ինձ բացակա չդնեք:

Ես եմ քարե պատարագ,
Ձեզնից սերված, ընդունեք,
Դուք, ձեր կամքին հակառակ,
Ինձ բացակա չդնեք:

3. Պետք է կարողանա թվարկել Համո Սահյանի բանաստեղծություններից մի քանիսը:

**Դաս 36**- Ս. Կապուտիկյանի կյանքն ու ստեղծագործական ուղին   Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞ր դարում է ապրել և ստեղծագործել Ս. Կապուտիկյանը:

2.Բանաստե՞ղծ, թե՞ արձակագիր է Ս. Կապուտիկյանը:

3.Նրա ստեղծագործությունների հիմնական թեման ի՞նչն է եղել:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1.Իմանա, որ Կապուտիկյանն ապրել ու ստեղծագործել է 20-րդ դարում:

2.Իմանա, որ Կապուտիկյանը բանաստեղծ է:

3.Իմանա, որ Կապուտիկյանի ստեղծագործության հիմնական մոտիվների մեջ իրենց ուրույն տեղն են ունեցել սիրային և հայրենասիրական թեմաները:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1. Պետք է կարողանա նշված տարբերակներից առանձնացնել Կապուտիկյանի բանաստեղծությունը.

ա/»Իմ քարափներն ու ես»

բ/»Խոսք իմ որդուն»

գ/»Հայրենի տուն»

դ/»Ես իմ անուշ Հայաստանի»

2. Պետք է կարողանա նշել չափածո ստեղծագործության տարբերակը.

ա/վիպակ

բ/հեքիաթ

գ/պատմվածք

դ/քառյակ

3. Պետք է կարողանա նշել արևմտահա՞յ, թե՞ արևելահայ բանաստեղծ է Կապուտիկյանը:

**Դաս 37-** <<Քելե՛, լաո՛>> բանաստեղծությունը   Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1.Ի՞նչ է նշանակում *լաո* բառը:

2. Ու՞ր է ուզում գնալ բանաստեղծության քնարական հերոսը:

3. Ո՞ր երգի հիման վրա է Կապուտիկյանը գրել այս բանաստեղծությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1. Իմանա, որ *լաո* նշանակում է «որդի, զավակ, երեխա, տղա»:

2.Իմանա, որ քնարական հերոսն ուզում էր պատմական հայրենիք գնալ:

3. Իմանա, որ բանաստեղծն այն գրել է «Քելե՛, լաո, քելե՛ էրթանք մըր էրգիր» ժողովրդական երգի հիման վրա:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1. Պետք է կարողանա նշել, թե ինչ տողով է ավարտվում բանաստեղծության առաջին և երկրորդ տները:

2. Պետք է կարողանա գրական հայերենով ասել «Իմա՞լ կեղնի, ի՞մալ չերթանք մըր էրգիր» նախադասությունը:

3. Պետք է կարողանա 2-3 նախադասությամբ բնութագրել, թե ինչ է պանդխտությունը:

**Դաս 38-** Պարույր Սևակի կյանքն ու ստեղծագործական ուղին [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞ր դարում է ապրել և ստեղծագործել Պ. Սևակը:

2. Սևակին ավելի մեծ փառքի ու ճանաչման հատկապես ո՞ր ստեղծագործությունը բերեց:

3. Ե՞րբ և ինչպե՞ս է մահացել Պ. Սևակը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1.Իմանա, որ Սևակն ապրել ու ստեղծագործել է 20-րդ դարում:

2.Իմանա, որ բանաստեղծը Մոսկվայում գրում, իսկ 1959-ին Երևանում տպագրվում է «Անլռելի զանգակատուն» պոեմը, որը հեղինակին տալիս է համաժողովրդական ճանաչում, արժանանում Հայաստանի Պետական մրցանակի:

3.Իմանա, որ Սևակը մահացել է 1971 թ-ին, ավտովթարից:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պետք է կարողանա նշված տարբերակներից առանձնացնել Սևակի բանաստեղծությունները.

ա/ «Քիչ ենք, բայց հայ ենք»

բ/ «Օրոր, Օրոր»

գ/ «Հայ ժողովրդի երգը»

դ/ «Նորօրյա աղոթք»

2.Պետք է կարողանա գրել՝ պոեմն արձա՞կ, թե՞ չափածո ստեղծագործության տեսակ է:

3. Պետք է կարողանա գրել Սևակի ժողովածուներից առնվազն երկուսի վերնագրերը:

**Դաս 39-** «Քիչ ենք, բայց հայ ենք» բանաստեղծությունը Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ տեղանուններ և հատուկ անուններ են նշվում բանաստեղծության առաջին հատվածում:

2. Ո՞ր տողերում է արտահայտվում հայ ժողովրդի շինարար և ստեղծագործ ոգին:

3. Ո՞ր միտքն է բացահայտում բանաստեղծի լավատեսության ու հայ ժողովրդի պայծառ ապագայի սպասումները:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Իմանա, որ բանաստեղծն իր ստեղծագործության մեջ գործածել է Արարատ, Սևան տեղանուններն ու Դավիթ, Նարեկ հատուկ անունները:

2. Իմանա, որ հայ ժողովուրդն ի սկզբանե եղել է կառուցող, շինարար, ստեղծագործ, երախտապարտ:

3. Իմանա, որ բանաստեղծը հայ ժողովրդի պայծառ ապագան արտահայտում է բանաստեղծության վերջին տողում. «Կանք: Պիտի լինե՛նք: Ու դեռ շատանա՛նք»:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պետք է կարողանա բանաստեղծությունից դուրս գրել հատուկ անունները:

2. Պետք է կարողանա ընդգծել այն տողերը, որտեղ հայը կառուցում է, արարում է, ստեղծագործում է:

3. Պետք է կարողանա բանաստեղծությունից դուրս գրել անծանոթ բառերը և բառարանի օգնությամբ գրել դրանց բացատրությունը:

**Դաս 40-** «Մոր ձեռքերը» բանաստեղծությունը [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.**

1. Ինչպիսի՞ հատկանիշներով է բնութագրում բանաստեղծը մոր ձեռքերը:

2. Բացի Սևակից էլ ո՞ր հեղինակներն են մորը նվիրված բանաստեղծություններ գրել:

3. Հատկանիշ արտահայտող ի՞նչ բառերով կբնութագրես մայրիկիդ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Իմանա, որ Սևակը մոր ձեռքերը ներկայացնում է հին, նոր, նուրբ, սուրբ, դատող, բանող, ճաքած, կոշտացած, խաս մակդիրներով:

2. Իմանա, որ բացի Սևակից մորը նվիրված բանաստեղծություններ գրել են նաև Ե.Չարենցը, Հ.Շիրազը:

3. Իմանա, որ մայրիկներին կարելի է բնութագրել այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են՝ բարի, սիրառատ, ներողամիտ, համբերատար և այլն:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պետք է կարողանա գրել հետևյալ բառերի հականիշները.

   *ա/հին բ/նուրբ գ/բանող դ/ճաքած*
2. Պետք է կարողանա տրված բառաշարքում ընդգծել այն հեղինակների անունները, որոնք մորը նվիրված բանաստեղծություններ են գրել.

   *ա/ Ե.Չարենց բ/ Դ.Դեմիրճյան գ/Հ.Շիրազ դ/ Պ.Սևակ*

3. Պետք է կարողանա գրել փոքրիկ շարադրություն իր մոր մասին:

**Դաս 41 -** Մուշեղ Գալշոյանի կյանքն ու ստեղծագործական ուղին [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1.Ո՞ր դարաշրջանի գրող է Մ. Գալշոյանը:

2.Արևելահա՞յ, թե արևմտահա՞յ գրող է Գալշոյանը:

3.Ո՞ր ժողովածուն գրողին դարձրեց հայտնի:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1.Իմանա, որ Գալշոյանը 20-րդ դարի գրող է:

2. Իմանա, որ Գալշոյանը արևելահայ գրող է:

3. Իմանա, որ գրողին մեծ ճանաչման արժանացրեց «Մարութա սարի ամպերը» պատմվածքների ժողովածուն:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1. Պետք է կարողանա ընդգծել, թե որ դարի գրող է Մ. Գալշոյանը.

ա/18-րդ դար

բ/20-րդ

գ/19-րդ

2. Պետք է կարողանա տարբերել, որ գրողը ստեղծագործել է.

ա/ արևելահայերենով

բ/արևմտահայերենով

3. Պետք է կարողանա նշված տարբերակներից առանձնացնել Գալշոյանի պատմվածքների ժողովածուն:

***«Հացավան»*** ***«Մարութա սարի ամպերը»*** ***«Ծաղկած փշալարեր»*** ***«Մթնաձոր»***

## Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ովքե՞ր են գլխավոր հերոսները:

2. Ի՞նչ հատկանիշներով կարող ես բնութագրելՄամփրեին:

3. Ի՞նչ հատկանիշներ կառանձնացնես նրա թոռանը բնութագրելու համար:

## Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ գլխավոր հերոսներն էին  ծերունի Մամփրեն, նրա թոռնիկը և հայոց տառերը:

2. Իմանա, որ Մամփրեն համառ, նպատակասլաց, առույգ ծերունի էր, ով չնայած բոլոր դժվարություններին՝ ծեր հասակում սովորեց հայոց այբուբենը, իրականացրեց իր երազանքը:

3. Իմանա, որ թոռնիկը ժիր ու պատրաստակամ էր, խիստ ու պահանջկոտ էր, լավ էր կատարում ուսուցչի իր դերը:

## Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա թվարկել պատմվածքի գլխավոր հերոսներին:

2. Պետք է կարողանա 2-3 նախադասությամբ գրավոր բնութագրել ծերունի Մամփրեի հատկանիշները:

3. Պետք է կարողանա 2-3 նախադասությամբ գրավոր ներկայացնել թոռնիկի բնութագիրը:

**Դաս 43 -** «Մամփրե արքան» պատմվածքի կերպարները [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1.Ո՞վ էր Մամփրեն:

2.Ինչպե՞ս էր պապը բացատրում աղբյուրի անվան առաջացման պատմությունը:

3.Ինչո՞ւՄամփրեն ատեց Օսմանին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1. Իմանա, որ Մամփրեն պատմվածքի գլխավոր հերոսն է:

2. Իմանա, որ աղբյուրը կոչվել է էպոսի Առյուծ Մհերի անունով:

3. Իմանա, որ Օսմանը կտրել էր աղբյուրի ջուրը, աղբյուրն էլ կոչել էր Աթաբունար անունով:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1. Պետք է կարողանա 2-3 նախադասությամբ բնութագրել պատմվածքի գլխավոր հերոսին:

2. Պետք է կարողանա բացատրել, թե ո՞ր աղբյուրի մասին է հիշատակվում պատմվածքում:

3. Պետք է կարողանա հակիրճ ներկայացնել աղբյուրի ստեղծման առասպելական պատմությունը:

4. Պետք է կարողանա բնութագրել Օսմանին և նշել  Օսմանին ատելու պատճառները:

**Դաս 44 -** Հրանտ Մաթևոսյանի կյանքն ու ստեղծագործական ուղին [Թեմատիկ պլանավորում]

## Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1.Ո՞ր դարաշրջանի գրող է Հրանտ Մաթևոսյանը:

2.Ի՞նչ վերնագրերով ժողովածուներ ունի գրողը:

3.Ի՞նչ ֆիլմեր են նկարահանվել Մաթևոսյանի ստեղծագործությունների հիման վրա:

## Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ Մաթևոսյանը 20-րդ դարի գրող է:

2. Իմանա 2-3 ժողովածուների վերնագրեր՝ «Տերը», «Օգոստոս», «Ծառեր»:

3.Իմանա, որ Մաթևոսյանի ստեղծագործությունների հիման վրա նկարահանվել են «Մենք ենք, մեր սարերը», «Աշնան արև» ֆիլմերը:

## Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա ասել, թե որ դարի գրող է Հրանտ Մաթևոսյանը

ա/20-րդ դար

բ/18-րդ դար

գ/19-րդ դար

2. Պետք է կարողանա թվարկել Հ. Մաթևոսյանի 2 ժողովածու:

3. Պետք է կարողանա ընդգծել Մաթևոսյանի գրական նյութերի բեմականացումով նկարահանված ֆիլմերից երկուսը.

ա/«Հովազաձորի գերիները»

բ/«Աշնան արև»

գ/«Ոսկե ցլիկը»

դ/ «Մենք ենք, մեր սարերը»

**Դաս 45** - «Կանաչ դաշտը» պատմվածքը (Մաս 1) [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ովքե՞ր են պատմվածքի հերոսները:

2.Որտե՞ղ էին տեղի ունենում պատմվածքի գործողութունները:

3.Ինչպե՞ս ավարտվեց մայր ձիու և գայլի մենամարտը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**.

1.Իմանա, որ պատմվածքի հերոսներն էին մայր ձին, քուռակը, գայլը, շները, որսորդները:

2.Իմանա, որ գործողությունները տեղի էին ունենում կանաչ դաշտում:

3. Իմանա, որ մենամարտն ավարտվեց մայր ձիու մահով:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1.Պետք է կարողանա 2-3 նախադասությամբ ներկայացնել մայր ձիուն և գայլին:

2 Պետք է կարողանա նկարագրել դաշտը:

3. Պետք է կարողանա նշել, թե պատմվածքն ինչպես ավարտվեց.

ա/ մայր ձիու մահով

բ/գայլի մահով

գ/ ձիու և գայլի հաշտությամբ

**Դաս 46 -** «Կանաչ դաշտը» պատմվածքը (Մաս 2) [Թեմատիկ պլանավորում]

### Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ինչու՞ սևադունչ գամփռը չկարողացավ բռնել գայլին:

2. Ինչու՞ պայթեց մայր ձիու սիրտը:

3. Հետագայում ի՞նչ է կատարվում քուռակի հետ:

### Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ գայլի վզից մի փունջ մազ էր մտել գամփռի բերանը, այդ պատճառով չկարողացավ:

2.Իմանա, որ ըստ ծեր հովվի՝ մայր ձիու սիրտը պայթեց քուռակի համար վախենալուց, զզվանքից ու կատաղությունից:

3. Իմանա, որ քուռակն ապրեց՝ մի ուրիշ ձիու կաթ խմելով:

### Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա նշել, թե շներից որն էր վարպետ.

ա/ Բոբը

բ/Սևոն

գ/Սևադունչ Թոփուշը:

2 Պետք է կարողանա 2-3 նախադասությամբ նկարագրել քուռակի ապրած վախի զգացողությունը:

3. Պետք է կարողանա նշել, թե ով էր պատմողը.

ա/ գամփռ շան տերը

բ/փոքր հովիվը

գ/ անցորդը

**Դաս 47 -** Վիլյամ Սարոյանի կյանքն ու ստեղծագործական ուղին [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**.

1. Ո՞ր դարում է ապրել և ստեղծագործել Վ. Սարոյանը:

2. Սարոյանի ծնողները որտեղի՞ց են գաղթել և որտե՞ղ են հետագայում բնակություն հաստատել:

3. Ի՞նչ լեզվով է գրել Սարոյանը:

**Պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)**

1.Իմանա, որ Սարոյանը ապրել և ստեղծագործել է 20-րդ դարում:

2. Իմանա, որ Վ. Սարոյանի ծնողները գաղթել են Արևմտյան Հայաստանից, ապրել են Ֆրեզնո քաղաքում:

3. Իմանա, որ Սարոյանը գրել է անգլերեն՝ հավատարիմ մնալով իր հայկական ծագմանը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1.Կարողանա նշել, թե որ դարի գրող է Վ. Սարոյանը.

ա/19-րդ դար

բ/20-րդ դար

գ/18-րդ դար

2. Պետք է կարողանա նշել այն երկիրը, որտեղ հետագայում բնակություն է հաստատել Սարոյան ընտանիքը.

ա/Ֆրանսիա

բ/Գերմանիա

գ/ԱՄՆ

դ/Թիֆլիս

3.Պետք է կարողանա նշել այն ստեղծագործությունը, որի հեղինակը Սարոյանն է.

«Կանաչ դաշտը», «Իմ սիրտը լեռներում է», «Ավելորդը», «Մամփրե արքան»

**Դաս 48 -** « Իմ սիրտը լեռներում է » թատերգություն (Մաս 1) [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**.

1.Ո՞վ էր թատերգության գլխավոր հերոսը:

2.Ո՞վ էր այն ծերունին, ում հանդիպեց Ջոնին:

3.Ի՞նչ մասնագիտություն ուներ Ջոնիի հայրը:

**Պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)**

1.Իմանա, որ թատերգության գլխավոր հերոսը Ջոնին էր:

2. Իմանա, որ ծերունին Մեք -Գրեգորն էր:

3. Իմանա, որ Ջոնիի հայրը բանաստեղծ էր:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1.Պետք է կարողանա առանձնացնել այն տարբերակները, որտեղ նշված են թատերգության հերոսները:

ա/ Մեք -Գրեգոր

բ/ Ջենի

գ/Միստր Գրիգ

դ/ Ջոնի

2. Պետք է կարողանա նշել այն գործիքը, որով նվագում էր Մեք-Գրեգորը:

ա/ ջութակ

բ/քամանչա

գ/շեփոր

դ/դուդուկ

3. Պետք է կարողանա հիշել՝ Ջոնիին ում մոտ ուղարկեց հայրը, որպեսզի հաց ու պանիր բերեր:

### Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ո՞վ էր Կոսակը:

2.Որտեղի՞ց էր փախել  Մեք-Գրեգորը:

3.Ինչու՞ նրանք հեռացան այն տնից, որտեղ ապրում էին:

**Պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)**

1. Իմանա, որ Կոսակը նպարավաճառ էր:

2. Իմանա, որ Մեք-Գրեգորը փախել էր ծերանոցից:

3. Իմանա, որ նրանք տան վարձը վճարել չկարողանալու պատճառով՝ հեռացան այդ տնից:

### Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա նշել՝ ինչն էր պատճառը, որ  Կոսակը չէր ուզում նրանց  պարտքով նպարեղեն տալ:

2. Կարողանա նշել՝ որտեղ էր թևածում Մեք-Գրեգորի սիրտը:

ա/հեռուներում

բ/լեռներում

գ/երկնքում

3. Պետք է կարողանա նշել այն հերոսին, ում խոսքով ավարտվում է դրաման. «Ես ոչ մեկի անունը չեմ տալիս, պա՛, բայց ինչ-որ տեղ, ինչ-որ մի բան սխալ է»:

ա/ հայր

բ/Մեք-Գրեգոր

գ/ Ջոնի

դ/ Կոսակ

### Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ ստեղծագործություն է «Իմ սիրտը լեռներում է» երկը:

2. Թատերգության ի՞նչ տեսակներ կան:

3.Երկխոսությու՞նն է բնորոշ թատերգությանը, թե՞ մենախոսությունը:

**Պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)**

1.Իմանա, որ «Իմ սիրտը լեռներում է» երկը թատերգություն է:

2. Իմանա, որ թատերգական սեռի երկերը լինում են ողբերգություն, կատակերգություն, դրամա:

3. Իմանա, որ թատերգությանը բնորոշ են և՛ երկխոսությունները, և՛ մենախոսությունները:

### Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա նշել՝ «Իմ սիրտը լեռներում է» երկը

ա/ դրամա է

բ/ պատմվածք է

գ/ողբերգություն է

2. Պետք է կարողանա հորն ու որդուն հերոս դարձնելով՝ գրել մի փոքրիկ երկխոսություն:

3. Պետք է կարողանա բացատրել ողբերգության և կատակերգության հիմնական տարբերությունը:

**Դաս 51–** Ջեկ Լոնդոնի կյանքը և ստեղծագործական ուղին [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1.Ո՞ր դարաշրջանի գրող է Ջեկ Լոնդոնը:

2.Արձա՞կ, թե՞ չափածո ստեղծագործություններ է գրել Ջեկ Լոնդոնը:

3.Ինչի՞ մասին է Լոնդոնի «Մարտին Իդեն» վեպը:

**Պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)**

1.Իմանա, որ Ջեկ Լոնդոնը 19-րդ դարի գրող է:

2. Իմանա, որ Ջեկ Լոնդոնն արձակագիր է:

3. Իմանա, որ «Մարտին Իդեն» վերպն ինքնակենսագրական վեպ է:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1. Պետք է կարողանա նշել՝ ինչ է Լոնդոնի անունը.

ա/ Ջեկ

բ/ Ջոն

գ/ Ջենի

2. Պետք է կարողանա նշել, թե ինչ ազգության գրող է Ջեկ Լոնդոնը.

ա/ ամերիկացի

բ/ իսպանացի

գ/ հույն

3. Պետք է կարողանա նշված տարբերակներից առանձնացնել Լոնդոնի վեպը:

***«Սպիտակ ժանիքը» «Մարութա սարի ամպերը» «Ծաղկած փշալարեր» «Մթնաձոր»***

**Դաս 52 -** «Ոսկե կիրճը» պատմվածքը [Թեմատիկ պլանավորում]

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Որտե՞ղ են կատարվում պատմվածքի իրադարձությունները:

2. Ո՞վ էր Բիլլը:

3. Պատմվածքի վերջում ո՞վ ու՞մ սպանեց. Բիլլն անծանոթի՞ն, թե՞ հակառակը:

**Պետք է իմանա (գրվում է յուրաքանչյուր հարցի համար)**

1. Իմանա, որ իրադարձությունները կատարվում են մի կիրճում:

2. Իմանա, որ Բիլլը պատմվածքի հերոսն էր, որը եկել էր կիրճ ոսկի որոնելու:

3. Իմանա, որ Բիլլին հաջողվեց սպանել իրեն սպանել ցանկացող անծանոթին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**.

1. Պետք է կարողանա հիշել՝ ինչն էր Բիլլին կիրճ հասցրել:

2. Պետք է կարողանա ներկայացնել Բիլլի ուրախությունը, երբ գտնում է ոսկու հատիկները:

3. Պետք է կարողանա նշել՝ ինչ գործիք էր անհրաժեշտ մարդուն ոսկի որոնելիս.

ա/մուրճ և սղոց

բ/ բահ և քլունգ

գ/կացին և ռանդա